ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 20

Բնակչության սոցիալապես անապահով և առանձին /հատուկ/ խմբերի ցանկում չընդգրկված անձանց անվճար կամ արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման ուղեգիր տրամադրող մշտական գործող մարզային հանձնաժողովի 2015թ.ապրիլի 8 ին կայացրած նիստի

Նիստին մասնակցում են հանձնաժողովի 7 անդամներ:

Օրակարգում՝

1. Անվճար կամ արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում առողջարանային վերականգնողական բուժման ուղեգիր տրամադրելու խնդրանքով ՀՀ Վայոց ձորի մարզպետին դիմած քաղաքացիների դիմումների քննարկում:

Զեկուցող՝ հանձնաժողովի քարտուղար Ց.Բաբայան:

Հանձնաժողովի քարտուղարը ներկայացրեց՝

Վայք քաղաքի բնակիչներ Նինա Ալավերդյանի, Մամիկոն Հարությունյանի, Եղեգնաձոր քաղաքի բնակչուհի Վիկտորյա Միրզոյանի դիմումները ուղղված ՀՀ Վայոց ձորի մարզպետին՝ առողջարանային վերականգնողական բուժման ուղեգիր ստանալու խնդրանքով:

Քննարկման արդյունքում հանձնաժողովը

ՈՐՈՇԵՑ

Ելնելով առողջարանային վերականգնողական բուժման ուղեգիր ստանալու համար ներկայացված փաստաթղթերից և բժշկական ցուցումներից պետական պատվերի շրջանակներում Վայք քաղաքի բնակիչներ Նինա Ալավերդյանին, Մամիկոն Հարությունյանին տրամադրել <<Գանձաղբյուր>> առողջարանի ուղեգիր, իսկ Եղեգնաձոր քաղաքի բնակչուհի Վիկտորյա Միրզոյանին <<Արզնի>> առողջարանի ուղեգիր :

Հանձնաժողովի նախագահ Հ.Սարգսյան

Քարտուղար Ց.Բաբայան